ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11)514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/16-15554 «02» 07 2021թ.

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Շենգավիթ վ/շ., Սևանի փ., 116

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 29.03.2021 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/27» ծածկագրով գնման պայմանագիր, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով:

Համաձայն պայմանագրի 8.15 կետի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանասական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Հաշվի առնելով, որ ընկերությանը 31.05.2021թ.-ին պատշաճ ձևով ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ, սակայն ընկերությունը սահմանված ժամկետում ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել համապատասխան փաստաթուղթը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջների համապատասխան, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Գ.Հարությունյան
Հեռ. 011-514-256